

ՊԵՏԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻՑ ԴԷՊԻ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Յաճախ մարդիկ վիճել են այն մասին, թէ արդեօք պատմութիւնը բացի իւր գիտական նշանակութիւնից, ուրիշ որեւէ արժէք ևս ունի, թէ ոչ: Եւ այդ հարցը շատ հասկանալի է ու տեղին: Ոչ որ բնական գիտութիւններից կամ մատեմատիկայից ուրիշ բան չի պահանջում, բայց եթէ իմացութիւն այն առարկաների, բազմակողմանի լուսաբանութիւն և մեկնութիւն այն օբյեկտները, որոնցով զբաղուած են այդ գիտութիւնները:

Այդպէս չէ սակայն մարդու հոգու, նրա ներքին աշխարհով զբաղւող գիտութիւնների առարկան: Այստեղ մարդը ինքն է, որ հանդէս է դալիս և ենթարկւում մեր ուսումնասիրութեան, մեր գիտողութեան: Մենք ուսումնասիրում ենք ու հետազօտում նրա հոգեկան աշխարհը, նրա ընդունակութիւնների չափը և յատկապէս այն գործունէութիւնը, որ արդէնք է եղել նրա ֆիզիկական և հոգեկան ընդունակութիւնների: Անհատի, հասարակութեան կատարած գործն է, որ մեզ զբաղեցնում է այստեղ: Ուրեմն անցեալը, արդէն կատարուածը, արդէն ժամանակի յաւիտենական հոսանքի սեփականութեան մի կտորը:

Այդ է պատճառը, որ ամեն անգամ, երբ մենք դառնում ենք մի անհատի կամ մի հասարակութեան անցեալ կեանքն ուսումնասիրելու, տողորում ենք լինում զուտ գիտական ինտերեսից դատ նաև մի այլ զգացումով, որը մեր մէջ չի նկատւում, երբ մօտենում ենք քիմիական, կենդանաբանական մատեմատիկական օբյեկտները: Որովհետև այս դէպքում օբյեկտն ինքն է չոր և առարկայական, անզգացում և անխօս, որ հնազանդւում է մեր փորձին, գիտողութեանը, չի խօսում մեր տրամադրութեան, մեր աշխարհայեացքի, մեր քաղաքական դաւանանքի հետ: Պարզ է, որ նոյնը ասել չենք կարող հասարակական և պատմական գիտութիւնների նկատմամբ: Այստեղ աւելի, քան որ է այլ գիտութեան մէջ դեր է խաղում հետազօտողի աշխարհայեացքը, քաղաքական իդէալները, հասարակական սպասումներն ու դադափարը, որով նա

ողեորում է, որը նա չի գտնում կեանքի մէջ և որի համար կռւում, պայքարում է: Այս գիտութիւնները բացի զուտ գիտական ինտելեկտից, ունին նաև հասարակական նշանակութիւն, որովհետև մեր համայնական—հասարակական կեանքի մէջ նրանք մեզ ղեկավարում են, առաջնորդի դեր կատարում—որովհետև մեր աշխարհայեացքի կազմութեան գործում նրանք մեծապէս նպաստում են:

Իմ փիլիսոփայական—հասարակական հայեացքների, իմ մտաւոր ու հոգեկան ներքին բովանդակութեան համար կարող է այս կամ այն պատմական մասնակի դէպքը գոյութիւն չունենալ, հասարակական գիտութիւնների այս կամ եզակի փաստը կարող է աննշան ազդեցութիւն ունենալ, բայց մարդկութեան պատմութիւնն ամբողջապէս կամ, որ գլխաւորն է, այդ պատմութեան ուղղութիւնն ու արեւելքը, նրա օրէնքներն ու զարգացման ուղիները, նրա համաշխարհային միասնականութեան, նրա մէջ գործող ֆակտորների առանձին ու միասին գործակցութիւնը—այս ամենի այս կամ այն կերպ իմացութիւնը ամենամեծ չափով ազդում է իմ աշխարհայեացքի վրայ, իմ համոզմունքներն ու խելական աշխարհի վրայ:

Ոչ միայն անհատն է այդ փաստը գիտակցել և այդ ուղղութեամբ գործունէութեան զիմել, այլ և համայնքներն ու ժողովուրդները: Եւ պատմական գիտութիւնների ուսումնն ու այդքան ինտելեկտ պարապմունքը բացի զուտ գիտական, իմացական հետաքրքրութիւնից, ամենամեծ չափով հիմնում է նաև այդ՝ միշտ նոր ու միշտ մոզեռն մոմենտի վրայ—ներկայի համար ճանաչել անցեալը, ներկայի նպատակների համար քրքրել անցեալի թերթիկները:

Որովհետև չմոռանանք, որ ժամանակը անբաժան է ու մի, ամբողջական ու միաձոյլ: Անըմբռնելի ու անսահման: Եւ միայն տեխնիկական յարմարութիւնների համար է, որ մենք բաժանում ենք մասերի, որպէս զի կտոր կտոր աւելի հեշտ լինի ուսումնասիրել: Բայց միշտ պէտք է ի նկատի ունենանք, որ ներկան անցեալի շարունակութիւնն է, որ այսօրն մէջ երեկն է ամփոփած և վաղուան օրը ներկայ մոմենտի մէջ է ծնունդ առնում:

Այդ հանգամանքը անհունապէս կարևոր է հասարակական գիտութիւնների և յատկապէս պատմագիտութեան նշանակութեան համար: Մարդկային կուլտուրան անընդհատ է ու անբաժան. նրա սկիզբը թաղում է անթափանց լսաւարի մէջ, նրա արմատները գնում, հասնում են մարդկութեան արեւոտ օրերը, երբ նա երեխայ էր ու անհող, երբ նրա հոգին

պարզ էր ու անզարդ, իսկ նրա վախճանը նոյնպէս անյայտ է ու ծածկուած հեռաւոր ասլադայի շատ աւելի մթին ծալքերի մէջ: Մենք ընկած ենք մարդկային անընդհատ ու անբաժան կուլտուրայի հոսանքի մէջ ու տարուած ենք այդ հոսանքով դէպի առաջ: Մենք ապրում ենք անցեալ սերունդներին աշխատանքներով, մերն ենք համարում հազարաւոր սերունդներին կատարած գործն ու աշխատանքը, մեր ժամանակի մէջ մենք բերեղացրած կերպով ապրում ենք մեր նախնիքների տառապանքներն ու վշտերը, նրանց ուրախութիւնն ու բերկրանքը, նրանց յոյզերն ու մտքերը, մենք կամքն ենք մեր նախորդներին:

Եւ հէնց կուլտուրան նրանով է հնարաւոր, նրա զարգացման աղատ ընթացքը նրանով է պայմանաւորուում, որ նախորդ սերունդների գործը չի մեռնում, այլ բերեղացած, զտուած ժառանգութիւն է անցնում յետնորդներին: Միմիայն նախապատմական կամ անպատմութիւն ցեղերն են, որոնց մէջ մի սերունդի գործը իսպառ ոչնչանում է և յաջորդ սերունդն ստիպուած է նորից սկսել և նորից ձեռք բերել մի քանի տարրական յարմարութիւններ, որպէս զի հէնց իրա հետ էլ դարձեալ գերեզման իջեցնի. միմիայն վայրենի ու անկուլտուր ցեղերի մէջ է, որ հնարաւոր է հազարաւոր տարիների մտաւոր ու հոգեկան նոյն բովանդակութիւնը, կենսական ու տեխնիքական նոյն ամենապարզ յարմարութիւնները կամ աւելի շուտ անյարմարութիւնները:

Արդի կուլտուրական ազդերը զարգացման ընթացքն այնպէս է, որ մի շրջան անհասկանալի կրմնայ առանց իւր նախնի շրջանի, զարգացման մի ֆազ հանելու է կրթուայ մեղ, եթէ այդ ֆազը իւր նախնի շրջանի ֆազով չպարզենք: Միշտ յիշենք, որ երէկը այսօրուայ հիմքն է, և վաղուայ օրը՝ ներկայ մոմենտի օրօրոցը:

Ահա թէ ինչու մարդիկ նորից և նորից պատմութեանն են դիմում, նրա հեռաւոր ու մօտիկ յիշատակարանները խօսեցնում հասկանալու համար այն վայրկեանը, որի մէջ նրանք ապրում են. ահա թէ ինչու պատմագիտութիւնը բացի իւր իմացական նշանակութիւնից—հասարակական և կուլտուրական, կրթական և այժմէական մեծագոյն ազդակը կարող է լինել ի թիւս այլ ազդակների:

*
* *

Բայց պատմութեան ամբողջ բովանդակութիւնը՝ հաւասարապէս հետաքրքիր և իմանալի գիտական տեսակէտից, հա-

ւասարապէս հետաքրքիր չէ սահայն կրթական կուլտուրական և այժմէական տեսակէտից: Մարդկութեան անցեալի մէջ կան մոմենտներ, որոնք առանձնապէս գրաւում են որոնողի ուշադրութիւնը, որոնք հանդէս են բերում շարժումի, յոյզի և պայքարի, իրար կտրող բաղմաթիւ ուղղութիւնների խաղաբեկ ընդհարումը, մոմենտներ, որոնց մէջ աւելի ցայտուն կերպով է երևան գալիս անցեալ սերունդների տենչը՝ դուրս գալ տեական անշարժութիւնից, թօթափել կաշկանդող շղթաները, հոգին ու մարմինն ստրկացնող կապանքները, ձգտել նոր կեանքի, նոր ու ազատ կարգերի, մոմենտներ, որոնց մէջ առանձին թափով բարախում են մարդկութեան սրտի զարկերակները, որոնց մէջ յատուկ ուժով և անման կենդանութեամբ աշխոյժանում, կայտառանում է մարդու հոգեկան կեանքը և պատմութեան սովորական հոսանքը մարմանդ ու հանգիստ—յորդանում, վարարում է ու նման մի լեռնային հեղեղափոխ—դուրս գալիս ամերից, ուռչում է ու իւր յորձանքների մէջ կուլ տալիս թոյլն ու աննշանը, սովորականն ու իր ժամանակն ապրածը, մի հեղեղատ, որ վերին բարձրունքներին դէպի պատմութեան դաշտավայրն է բերում նոր իդէաներ, կեանքի նոր պայմաններ և ձևափոխում, կերպարանափոխում կեանքը: Հետաքրքիր են այդ մոմենտները, հետաքրքիր և ուսանելի:

Այդ մոմենտները յայտնի են պատմութեան մէջ անցման օրջան անունով: Դրանք այն շրջաններն են, որոնք բոլոր նշաններն ունեն կոշտելու ազդերի և համայնքների յոյզերի, մղուքերի, տենչերի խառնարան. ուր վերջանում է հինն ու ընդարմացածը, մեռնում, խորտակւում է մի ամբողջ աշխարհահայեացք ու մտքերի ու յոյզերի սաստիկ ընդհարման մէջ, զգացմունքների ու տենչերի ուժգին բաղխման մէջ ծնւում է նորը, աւելի ազատը, աւելի անկաշկանդը, սկզբում բուռն թափով, ուժգին ու յախուռն, իւր հոսանքի մէջ պղտոր, իւր ձգտումի մէջ անորոշ ու տարտամ—սահայն հետզհետէ պարզուելով, վճիտանալով, նման դարձեալ հեղեղատին, որը դաշտ դուրս գալով աւելի մարմանդանում է ու պարզւում, իւր կատաղի հոսանքն աւելի կասեցնում է ու վճիտանում:

Անցման մեծ շրջաններ պատմութիւնը երկու հազարամեակների մէջ երկու անգամ է հանդէս բերում—մէկը, երբ մեռնում, անհետանում էր հին աշխարհը—յոյն և հռովմէական կուլտուրան ու նրա վրայ կառուցւում բարբարոս գոթերի ու անտառաբնակ գերմանների զօրութիւնը. միւսը, երբ կորչում, գունատւում էր միջնադարեան կուլտուրան իւր տիպիկ

կողմերով, ու նրա տեղ բարձրանում նորդարեան վեհ ու հըպարտ դրօշակը:

Երկու դէպքումն էլ մեծ նշանակալից մոմենտներ, որովհետեւ երկու շրջանում էլ ջախջախւում, փուլ են գալիս բազմադարեան կուլտուրաներ և ավերակների բեկորների վրայ հիմք դրւում նոր կեանքի ապագայ հպարտ ու գոռ ապաւանքներ:

Իմ նպատակն է վերցնել այս անգամ այդ մոմենտներից երկրորդը—որը ընկած է միջին դարերի և նոր ժամանակների մէջ, ու այդ անցման շրջանի վրայ մի անգամ էլ պատկերացնելով միջնադարեան կուլտուրայի տիպիկ ու բնորոշ կողմերը, մի անգամ էլ սեղմ ու ամփոփ առաջ բերելով միջնադարեան քաղաքակրթութեան բուն էութիւնը, ցոյց տալ, թէ ինչպէս հէնց այդ միջնադարեան իրականութեան մէջ հետզհետէ պատրաստւում, հասունանում են նոր ուղղութիւններ, նոր հոսանքներ, որոնք յետոյ ուժեղանալով, կրկին թափ ու անօրինակ եռանդ ստանալով պայքարի մէջ են մտնում նոյն այդ միջնադարեան տիպիկ կողմերի հետ, պայքարում, մաքառում նրա հետ և վերջ ի վերջոյ միջնադարեան կուլտուրայի փլատակների վրայ կառուցանում նորդարեան հոյակապ շէնքը, որը այնուհետեւ դառնում է մեր մոդեռն աշխարհահայեացքի հաստատուն հիմքը:

Ինչ ենք հասկանում միջին դար ասելով, ո՞րն է միջնադարեան կուլտուրայի բուն էութիւնը, նրա տիպիկական կողմերը:

Իբրեւ ընդհանուր դրութիւն ասեմ, որ թէ այս հարցին պատասխանելիս և թէ յետագայ խնդիրների լուսաբանութեան ժամանակ ես մտադրութիւն չունեմ մանրամասնութեանց մէջ մտնել, իմ առաջադրած նպատակների համար բաւական է, եթէ ինձ յաջողուի ընդհանուր բայց էքսակտ գծերով դուրս բերել էպոխաների բնութագիրը, խոշոր շտրիխներով անդամահատել այդ էպոխաների էութիւնը և ցոյց տալ, թէ միջնադարեան բնորոշ գծերից որը ինչ կերպարանափոխութեան է ենթարկւում նոր ժամանակների շէմքում:

Ուրեմն ինչ ենք հասկանում միջին դար ասելով, և ո՞րն է միջնադարեան կուլտուրայի բուն էութիւնը:

* *

Մեր տարեհաշուի առաջին հազարամեակում Եւրոպական ազգերի հասարակական—տնտեսական—սոցիալական կեանքը

պայմանաւորուած է մի երեւոյթով, որը կոչուած է ֆեոդալիզմ, աւատականութիւն: Դա մի երեւոյթ է, որ թափանցում է միջնադարեան հասարակութեան բոլոր խաւերը, բնորոշում նրա տնտեսութեան ձեւը, պայմանաւորում նրա իրաւական և հանրային յարաբերութիւնները, առտիճանաւորում և բաժանում հասարակական դասակարգերը:

Յայտնի է, որ միջին դարում իշխանութեան և հարստութեան միակ աղբիւրը հողն էր: Ով հող ունէր, նա ունէր նաև իշխանութիւն, ունէր նաև զօրութիւն և պետական գործերի վրայ ազդեցութիւն: Եւ ով ամենից շատ կալուածք ունէր, հէնց այդ հանգամանքի շնորհիւ էլ ամենից զօրաւոր մարդն էր միջնադարեան հասարակակարգի մէջ: Իսկ հողը մեծ մասամբ կենդրոնացած էր արիստոկրատիայի, ազնուականութեան ձեռքում: Թագաւորն ու նրա մերձաւոր բարեկամները, դուքսերն ու կոմսերը, բարոններն ու ասպետները հետզհետէ իրանց ձեռքն են քաշում միջնադարեան պետութիւնների բոլոր հողերը և այդպիսով դառնում պետութեան մէջ ամենաազդեցիկ դասակարգը: Հողեր ունէին նաև հոգևորական բարձրատիճան անձնաւորութիւնները և հաստատութիւնները—վանքերն ու մենաստանները, եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսութիւնները:—Սակայն միջնադարեան հողատիրութիւնը բոլորովին տարբեր է արդի հողատիրութիւնից: Միջին դարում հողը այն ֆաիտորն էր, որ հասարակութիւնը երկու խմբի էր բաժանում—ազատների և ճորտերի: Բոլոր հողատէրերը, բոլոր նրանք, ովքեր հողին տէր էին յաւիտենական փամանակներով կամ որոշ պայմաններով և որոշ փամանակով—զրանք բոլորը համարւում էին ազատ—տնտեսապէս և իրաւապէս: Իսկ նրանց հողի վրայ նստած ժողովուրդը դառնում էր այդ հողատէրի ճորտը: Ճորտի թէ տնտեսական և թէ իրաւական դրութիւնը կախուած էր կալուածատիրոջ կամքից: Ճորտը զուրկ էր անձնական իրաւունքներից, նա զուրկ էր նաև սեփական տնտեսութիւն ունենալու հնարաւորութիւնից: Նա ապրում էր հողատիրոջ հողի վրայ, իւր աշխատանքով մշակում էր նրա հողը, ամեն աշխատանք անում էր նրա համար և այդ ամենի փոխարէն ստանում էր ազնուականի կամ կալուածատիրոջ պաշտպանութիւնը, նրանից սնունդ և կերակուր և ուրիշ ոչինչ: Ազատ մարդկանցից մէկը, եթէ շատ հող ունէր, կարող էր զրա մի մասը տալ մի ուրիշի, կրկին մի ազատ մարդու, որը առաջինի վաստակն էր դառնում, նրանից աւատական կախման մէջ էր դրւում:

Փաղաքական տեսակէտից իւրաքանչիւր հողատէր—լինի

նա բարոն թէ հերցոգ, գրաֆ թէ ասպետ, իւր հողի վրայ լիակատար իշխան է, ոչ որ նրանից բարձր չէ, նա չի ենթարկւում ոչ որի իրաւունքներին, ճանաչում է միայն իրան հաւասարների դատաստանը. այլապէս անսահման տէր է իւր հողի սահմաններում: Նոյնիսկ երկրի թագաւորը նրա նկատմամբ դերագոյն տէր չէ, որովհետեւ պրինցիպով բոլոր ֆէոդալական իշխանները—մանր ու խոշոր—սկզբունքով իրար հաւասար են և թագաւորը հաւասարների մէջ առաջինն է լինի: Ինչ խօսք, որ վաստաւական իշխանն իւր անսահման քմահաճոյքը ամենից առաջ պէտք է ցոյց տար իւր հողի վրայ ապրող իրաւադուրի ժողովրդի նկատմամբ, որը կորցնելով իւր բոլոր ազատութիւնները, միջին դարերում վերջնականօրէն կաշոււմ է հողին և ճորտ դառնում: Բաղմաթիւ ու բաղմադան պարտականութիւններով կապուած էր նա այնուհետեւ իւր իշխանի, իւր սինեօրի հետ, որի ողորմած ձեռքերից նա հաց էր ուտում: Եւ եթէ ի նկատի ունենանք, որ միջնադարում հողը շնորհիւ ֆէոդալական այդ կազմի չափազանց մանր ու աննշան մասերի էր բաժանուել, առաջ էին եկել բաղմաթիւ երկրորդական երրորդական և ամեն կարգի ու աստիճանի բարոններ, աղնուականներ, որոնցից իւրաքանչիւրն իւր հերթին նեղում, կեղեքում էր բաղմամիլիոն երկրագործ և ճորտ հասարակութեանը—այն ժամանակ պարզ կրէին մեզ համար, որ ֆէոդալական կազմը կապարի ուժով պէտք է ընկնէր այդ ահագին բաղմութեան վրայ ու ճնշէր:

Հողի բաժանուածութեան հետ բաժանուած էր նաև քաղաքական իշխանութիւնը. միջին դարում չկար Եւրոպայում մի թագաւոր, որ իւր բոլանդակ երկրին տէր լինէր, որը կամքով ու ցանկութեամբ վարուէին պետութեան բոլոր գործերը: Բաղմաթիւ աւատական իշխանները գոյութիւնը անկարելի էր դարձնում կենդրոնական զօրեղ իշխանութեան յառաջացումը. այդ է պատճառը, որ միջնադարեան թագաւորներն ու կայսրները երբէք չկարողացան իրանց ձեռքում կենդրոնացնել աշխարհական ու զինւորական ամբողջ ոյժը: Այդ գործում դեր խաղաց նաև այն հանգամանքն ի հարկէ, որ միջնադարեան եկեղեցին շարունակ կռուի, պայքարի մէջ էր պետութեան հետ և ջլատում էր աշխարհիկ իշխանութեան կենդրոնաձիգ ձգտումները:

*
* *

Վերջին կէտով մենք շօշափեցինք միջնադարեան կեանքի երկրորդ նշանաւոր կողմը—եկեղեցին ու կրօնական ոգին:

Յայտնի է, որ միջին դարում ամբողջ Եւրոպայում մի կրօն կար և մի դաւանութիւն. կաթոլիկ եկեղեցին էր, որ արեւմտեան ժողովուրդներին մէջ տիրապետող էր: Հռոմի եպիսկոպոսը, որ սկզբում միւս եպիսկոպոսներին հաւասար էր և հաւասարներին մէջ առաջինը լոկ—*primus unter pares*—յետագայում, շնորհիւ Հռոմ քաղաքի կենդրոնական նշանակութեան, դանադան իշխանների և թագաւորների առատ նուիրատուութիւնների, շատ շուտով մեծամեծ կալուածքների տէր է դառնում. և հէնց այդ պատճառով էլ իշխանութեան համը միանգամ առնելով—Հռոմի պապերն այնուհետեւ ձգտում են աւելի և աւելի ընդարձակել իրանց իշխանութեան սահմանները և տէր դառնալ ազգերի բոլոր իրաւունքներին: Նոցա ձեռքին միանպարտելի, մի կախարդական զօրութիւն կար. մարդկանց հոգիների ապագայ վիճակը Հռոմի պապերն իրաւունք էին համարում իրանց իրաւասութեան շրջանի մէջ մտցնել. նրանք հոգ էին տանում հոգիների փրկութեան համար և քարոզում ու տարածում, որ միմիայն Հռոմի եկեղեցու մէջ է, այդ եկեղեցու դերագոյն պետի—պապի միջոցով է, որ քրիստոնեան փրկուել կարող է, Քրիստոսի փոխանորդը, ապա յետոյ նաեւ յաջորդը, պապը ինքն է, որի աթոռը Հռոմի եկեղեցին է, որից դուրս չկայ փրկութիւն և ոչ մի հոգու: Դարեր շարունակ Հռոմի եկեղեցին իւր հլու հնազանդ ծառաներով, վանքերի, մենաստանների, քարոզող վանականների, մուրացիկ կարգերի, Դոմինիկեան և Ֆրանցիսկեան պրոպագանդիստների միջոցով կարողանում է իւր հետ կապել կաշկանդել ամբողջ Եւրոպական աշխարհի ուշադրութիւնն ու հոգին: Թագաւորն ու իշխանը, ասպետն ու բարոնը, քաղաքացին ու ճորտը—բոլորն էլ մի մոմենտում իրար հետ միանում էին—այդ մոմենտը ընդհանուր պատկառանքն ու երկիւղածութիւնն էր, որ նրանք տածում էին դէպի բոլորին փրկութիւն խոստացող կաթոլիկ եկեղեցին:

Կաթոլիկ եկեղեցու եռանդուն վարդապետները քարոզում, ընդհանրացնում էին, որ մարդու հոգին անհունապէս բարձր է մարմնից, որ պէտք է արհամարհել մարմնականը, աշխարհականը. պէտք է ատել ու խորշել ընդթիւնից ու փնտրել միմիայն հոգեւոր հոգեկան միութարութիւն. իսկ այդ միութարութիւնը կարող էր տալ միմիայն Հռոմը: Հոգու ներկայացուցիչը եկեղեցին է, իսկ մարմնինը — պետութիւնը: Այստեղից հետեցնում էին, որ եկեղեցին պէտք է իրան ենթարկէր նաեւ պետութիւնը: Աշխարհական պետութիւնը կարող է ապրել և իշխել այն սահմաններում, ինչ սահմանե-

բոլոր աշգ-կրկամենար եկեղեցին և չէր հակասի եկեղեցու շահերին ու ձգտումներին. այլապէս նա իւր բոլոր մասերում պէտք է ենթարկուէր եկեղեցուն: Որովհետեւ հասարակ հոգեւորականը բարձր էր հասարակ աշխարհականից, եպիսկոպոսը բարձր էր իշխանից և պապը բոլոր թագաւորներից ու կայսրներից, որովհետեւ նա Քրիստոսի յաջորդն էր, իւր ձեռքում ունէր բոլոր հոգիները կապելու և արձակելու իրաւունքները: Միայն նա իրաւունք ունէր որոշելու թագաւորների ու կայսրների իրաւասութեան սահմանը. միայն նա կարող էր աշխարհի բոլոր հոգերն ու իշխանութիւնները իւր սեփական նստիւթիւն համարել: Նա չէր ենթարկուում ոչ մէկի դատատանին, ոչ անհատական և ոչ ժողովրդական. նա բարձր էր բոլոր անհատներից ու բոլոր ժողովուրդներից: Քրիստոսից ազատ իրաւունք էր տրուած համարձակօրէն տեղահան անել ու նորից իշխանութեան կոչել կայսրներին: Վաճ նրան, ում որ պապը բանադրէր, նա զրկւում էր ամբողջ քրիստոնեայ աշխարհում պաշտպանութիւնից, զրկւում էր ապրելու իրաւունքից: Հոգեւոր և աշխարհական գործերում ծայրագոյն տէրն ու գերագոյն դատաւորը Հռոմի պապն էր, որի իշխանութիւնը խորհրդաւոր էր ու կախարդական էր, որովհետեւ Աստուծոց էր դալիս: Վաճ նրան, ով չէր հնազանդի պապի քարոզակ հրամաններին: «Հռոմի քահանայապետին հաւատարիմ հպատակ լինել անհրաժեշտ պայման է ամեն մէկի համար, ով ցանկանում է յաւիտենական երջանկութեան հասնել»—վարդապետում է միջնադարեան մեծագոյն աստուածաբան Թոմաս Աքուինացին:

Եւ աշխարհի մէջ չի եղել որեւէ պետութիւն, որի մէջ հնադանդութեան, անխօս հպատակութեան գործն այնպէս ճարպիօրէն կազմակերպուած լինէր, ինչպէս Հռոմի եկեղեցին էր: Եկեղեցին մի էր բոլոր ազգերի և ցեղերի համար Եւրոպայում: Եւ այդ մի և ընդհանրական եկեղեցու մէջ իւրաքանչիւր աշխարհական լոկ պարտականութիւններ ունէր եկեղեցու նկատմամբ—և ոչ երբէք իրաւունք. նա եկեղեցու ստրուկն էր և այն էլ ստրուկ իւր սեփական կամքով: Հոգու փրկութեան հոգսը ահա թէ ուր էր հասցրել միջնադարեան մարդուն:

Իւր այս անսահման և անախոյեան իշխանութիւնը Հռոմի եկեղեցին կեանքի ոչ մի կողմի մէջ այնպէս բացարձակօրէն չէր գործադրում և հանդէս բերում, ինչպէս կրթական գործի մէջ: Կրթական գործը, ուսումն ու դպրութիւնը հէնց սկզբից հոգեւորականների արածոնութիւնն էր և, շատ սակաւ բացա-

առութեամբ, ամբողջ միջին դարում մ'նում է նրանց ձեռքում: Այդ երեոյթը լիապէս հասկանալու համար երեւակայէնք մերոպէ, որ բոլոր դրքերը, բոլոր մատեաններն ու ամբողջ մասմուլը, այլ և բոլոր դպրոցները, բարձրագոյն ու միջնակարգ և ժողովրդական—մի խօսքով մտաւոր հաղորդակցութեան բոլոր միջոցները մէկի ձեռքում կենդրոնանան, պետութեան կամ եկեղեցու արտօնութիւնը լինին—հասկանալի կըլինի այնուհետեւ այն հսկայական ազդեցութիւնը, որ ունէր միջնադարեան կաթոլիկ եկեղեցին: Հոգեւոր կեանքի բոլոր երակները հոսում էին կամ վանքերը, մենաստանները կամ քաղաքները և կամ համալսարանները—ամեն աեղ իշխողն ու տէրը հոգեւորականն էր, կաթոլիկ եկեղեցին—որը գործում էր միաձոյլ և հետեւողական ծրագրով: Ուսման բուն կենդրոնը բնականօրէն աստուածաբանութիւնը կարող էր լինել—միակ դիտնականը աստուածաբանն էր, մ'նացած բոլոր գիտութիւնները երկրորդական, ստորադաս նշանակութիւն ունէին աստուածաբանութեան նկատմամբ. փիլիսոփայութիւնը աստուածաբանութեան աղախինն էր, ինչպէս ընդունուած էր ասել: Կեանքի փորձը, դիտողական միջոցները գոյութիւն չունէին միջնադարեան գիտնականի համար. ոչ էլ բանականութեան աստուածային փայլն էր, որ նրանց լուսաւորում էր. այլ հեղինակութեան առաջ կուրօրէն հպատակութիւն և երկիւղած խոնարհում—ահա այն ժամանակների գիտական ու մտաւոր, սոցիալական ու հասարակական կեանքի գլխաւոր բնորոշ գիծը: Սխոլաստիկան—գիւլեիտիկայի հետ միացած—դարձաւ միջնադարեան մտաւորականութեան եղակի ու համայնապարփակ մեթոդն ու առարկան, և սխոլաստիկայի ամենափայլուն ներկայացուցիչը, ինչպէս և միջնադարեան կաթոլիկութեան մեծագոյն թէորետիկ ախոյեանը Թոմաս Աքուինացին էր:

*
* *

Միջնադարեան կեանքի երրորդ նշանաւոր ու բնորոշ գիծը ճգնաւորական—ասկետական կողմն է, որ այսպէս ցայտուն կերպով երևան է գալիս այդ կեանքի բոլոր մասերում: Բնութիւնը—լինի դա մարդոց մէջ թէ մարդուց դուրս—արհամարհւում էր. «Աստուած հակադրւում էր աշխարհին և աշխարհը Աստծուն»: Ով ուղղում էր սիրել Աստծուն, պէտք է հեռանար աշխարհից. ուրիշ ընտրութիւն չկար: Աշխարհն ու աշխարհայինը անէծքի ըստին էին. բոլոր մտքերը պէտք է ուղղուած լինէին դէպի հանդերձեալ կեանքը: Սէրը մի զաղրելի յանցա-

գործութիւնն էր համարուում—որովհետեւ նա խանդարուում էր մարդուն Աստուծոյ հետ միանալու: Կինը վերին աստիճանի զգուշելի մի արարած էր համարուում—մեղքի և ապականութեան անօթ: Ոչ մի դարում կնոջ հասցէին այնքան այլանդակութիւններ չեն դրուել, ինչպէս միջին դարերում: Ընտանիքի, տեմականութեան, աշխարհային բարիքների և վայելքների բացասումը բնականօրէն պիտի տանէր աղքատութեան քարոզին. դրանից էլ հատկանալի է միջնադարեան մուրացիկ կարգերի երևոյթը:

Սակայն լուի պատսիւ մեկուսացումը չէր բաւականացնում միջնադարեան ճգնաւորի վառ երեւակայութիւնը: Նրա մէջ զօրեղ կամք կար ու աշխարհի գայթակղութիւնը միշտ սպառնում էր նրան: Եւ որպէս զի մի անգամ ընդմիշտ ազատուի ճգնաւորը այդ դիւական կոչից—նա աշխատում է ամեն կերպ սպանել, մեռցնել իւր մէջ կամքը, ցանկութիւնը: Նա քաշուում է քաղաքից ու շէնքերից հեռու, փակւում է մի քարայրի կամ մի յետ ընկած խուցի մէջ ու կտրուելով աշխարհից սկսում է իրան «կրթել»—ծեծել ու խարաղանել—որպէս զի արժանի լինի հանդերձեալ կեանքին: Բանականութեան ձայնն ու կամքի բռնկումները ճնշւում, սպանւում էին ստրկական դիւցիպլինայի և մեռցնող, ոչնչացնող հնազանդութեան տենչի մէջ: Եւ ապրում էր միջնադարեան ճգնաւորը աշխարհից դուրս—հակառակ աշխարհին, որպէս զի ապագայում Աստուծոյ գատառտանի ժամանակ զառների մէջ յայտնուի:

Մինչև այժմ մենք տեսանք երեք նշանաւոր բնորոշ գծեր—առաջ քաշեցինք միջնադարեան կեանքի ամենաաչքի ընկնող զարկերակներից երեքը—որոնք իրանցով բնորոշում, հիմնաւորում և պայմանաւորում են եւրոպական կեանքի մօտ մի հազարամեակը: Ամբողջով այդ կողմերը, մենք պէտք է տեսնք, որ դրանց բոլորին էլ յատուկ է մի գիծ, որ ամենից շատ է բնորոշում միջնադարեան մարդուն—դա անհատականութեան, անձնաւորութեան բացակայութիւնն է: Միջին դարում մարդ-անհատը չքանում, կորչում է կարծէք, ձուլւում, անհետանում է մասսայի մէջ, և մեր առաջ փոխանակ նաև ուժեղ անձնաւորութիւնների, փոխանակ անձնական անհատական զօրեղ կամքի ու յոյզերի, զրգումների և մոտիւնների—տեսնում ենք գորշ մասսան, որ կարծես գլուխ չունի, որի մէջ թաղուել, անհետացել է անհատը, որն այլ ևս իւր համար չի ապրում, որն այլ ևս աշխարհի մէջ իւր մասնակի նպատակներն ու սպասելիքները չունի—այլ կամայ թէ ակամայ ընկած միջնադարեան ընդհանուր հոսանքի—կաթոլիկ եկեղեցու, հեղինակութեան,

կրօնական պաշտամունքի հոգսերի մէջ—խալառ հրաժարուել է իւր անձից և իւր պարտականութիւններն է կատարում, առանց որ և է իրաւունք ունենալու: Աւտորիտետը գերագոյն պրինցիպն է միջնադարեան մարդու հոգեբանութեան մէջ, որին նա կուրօրէն անձնատուր է, և աւտորիտետներից գերագոյնը կաթոլիկ եկեղեցին է, որը և ճակատագրի ուժով իշխում է միջնադարեան աշխարհի մէջ:

Այս է ահա ընդհանուր բնութագիրը այն ժամանակաշրջանի, որ յայտնի է պատմութեան մէջ «Միջնադար» անորոշ և մութ անունով: Թէև ընդունուած է սովորաբար միջին դարը սկսել V դարից և վերջացնել XV դարում, բայց պէտք է ասենք, որ միջին դարը իւր տիպիկական կողմերով սկսւում է իրականութիւն դառնալ հազիւ VII դարից և իւր գագաթնակէտին հասնում 11, 12-րդ դարերում և սկսած 13-րդ դարից նսւաղում, դժգոհանում է և հանդէս է բերում երեւոյթներ, որոնք արդէն միջնադարեան չեն, այլ անցման օրջանի բնատուրութիւն են կրում. նորա աւետում են պատմութեան մէջ նոր ժամանակների խորհրդաւոր ու դրաւիչ արշալոյսը—դանդաղօրէն ու անտիճանաբար, բայց հաստատ ու աներկբայ:

Ինչ խօսք՝ որ ասելն անգամ աւելորդ է, որ միջին դարը բացի մեր մասնանշած բնորոշ գծերից իւր ինտիմ կեանքում ունէր ու պէտք է ունենար խայտաճամուկ մի բազմազան պատկեր, իւր խնդն ու ուրախութիւնը, իւր յոյզերն ու բերկրանքը, ասպեալ իւր ուրախ խաղերն ու ռազմական ոգին, քաղաքացին իւր ինքնայատուկ բաւականութիւնները, իշխաններն իրենց ցեօրաւական ցնորքները. բայց մենք կարեւոր չհամարեցինք դրանց վրայ երկարօրէն կանգ առնել, որովհետեւ մեր նպատակն էր միջին դարին մօտենալ հասկանալու համար հէնց միջնադարեան կուլտուրան:

Մենք այժմ կանցնենք անցման շրջանին և իրար յետեւից մեր նկատառութեան սահմանի մէջ կրքաշենք այն բոլոր ֆակտորներն ու երեւոյթները, որոնք յեղաշրջեցին միջնադարեանը և ստեղծեցին նոր ժամանակների կուլտուրան:

* *

Ամենից առաջ ժողովուրդների սոցիալական-սոցիալական դրոյթներ՝ ֆէոդալիզմը փակուածութեան, մանր, փոքրիկ ամբողջութեան, կաշկանդուածութեան սկզբունքն էր, որ իրագործուել էր այդքան փայլուն և հետեւողական կերպով: Տնտեսութիւնը փակ գերդաստանային էր, արտադրութիւնը լոկ

սեփական կարիքների բաւարարման համար: Զկար փոխանակութիւն, չկար առեւտուր, չկային քաղաքներ քիչ շատ դարգացած արհեստներով ու առեւտրով: Եղած քաղաքներն էլ որակով շատ քիչ էին տարբերուում մեծ գիւղերից: Բայց այս կարգը տատանուել է սկսում դեռ 11-րդ դարից սկսած: Խաչակրաց արշաւանքները ուրիշ շատ հետեւանքների հետ այն արդիւնքն ունեցան, որ ժողովուրդները գուրս եկան իրանց անշարժութիւնից, ահադին մասոսաներ երկրէ երկիր անցնելով, աշխարհէ աշխարհ թափառելով հետզհետէ փոխանակութեան ուղին են բռնում: չորս կողմն են նայում, յարաբերութիւն սկսում օտար երկիրների, օտար մարդկանց հետ—նոր թելեր, նոր նեարդեր—տնտեսական, հասարակական, քաղաքական, հիւսուել են սկսում միջնադարեան Եւրոպայի և արեւելքի միջև: Երեւան եկող առեւտուրը իսկոյն և եթ ահնայտնի է դարձնում, որ ճորտատիրական, փակ գերդատտանային տնտեսութիւնը չպիտի կարողանայ այլևս երկար դիմանալ: որովհետեւ ինչ միտք ունի զանազան տեսակի առարկաներ տանը արտագրել, քանի որ առեւտրի շնորհիւ նոյն առարկաները աւելի հեշտ է լինում շուկայում աւելի էժան գնել: ինչ միտք ունի որ և է բնական բարիքից—ցորեն, գարի, բուրդ... տանը շտեմարանները լցնել պահել, ինչպէս վարւում էին մինչև այդ, քանի որ այժմ հնարաւորութիւն է ստեղծւում աւելի օգուտով ծախել այդ բարիքը և փոխարէնը ուրիշ գնել: Այսպիսով առեւտուրը, նոր սկսող ազատ փոխանակութիւնը սպառնում է բնական տնտեսութեան սիստեմին: ճորտատիրական շատ կարգեր, բնական բերքով հատուցանելի շատ ծառայութիւններ վեր են ածւում դրամի, և փողը—մինչև այդ պատահական ու անկանոն—արդէն սկսում է դեր խաղալ մարդկանց տնտեսական յարաբերութիւնների ժամանակ: Երկրագործութիւնը, որի միջամեն բան միացած էր մինչ այդ, այժմ սկսում է բաժանուել, անջատուել ինդուստրիայից, արդիւնաբերութիւնը բաժանւում է բազմաթիւ ճիւղերի: ճորտ դասակարգը հետզհետէ խախտելով իւր կապուածութիւնը, դրամի շնորհիւ իրաւունք է ձեռք բերում քաղաք քաշուել և այնտեղ արհեստով պարապել: Շինում են բազմաթիւ քաղաքներ, հին քաղաքները լցում են մարդկանցով և առաջ է գալիս հասարակական մի մեծ դատ—քաղաքացիների դատը—սկզբում երկչոտ ու անհաստատ, բայց հետզհետէ զօրեղանալով ու գիտակցելով իր ուժերի նշանակութիւնը: Քաղաքացու բնորոշ պարապմունքը դառնում է արհեստը, արդիւնաբերութիւնը և մանաւանդ առեւտուրը—պաշտաններ, որոնք յե-

տոյ նրան պիտի տային տնտեսական և իրաւական գերազան-
սութիւնը: Քաղաքացի առևտրականը թափառական էր. նա
ինքը պիտի գնար, իւր ապրանքի համար գնորդներ գտնէր—
առևտրականի մշտական թափառումները, նրա մշտական
շփումը օտար ժողովուրդներին, օտար ու անծանօթ սովորու-
թիւններին, շատ անգամ թշնամի դաւանութիւններին ու ազ-
գերի հետ—այս բոլորը նրան դարձնում են աւելի հանդու-
ժող, աւելի ազատամիտ, աւելի պայքարող բռնութեան և
կապանքներին դէմ: Միջնադարեան աշխարհահայեացքը այլ ևս
չի դիմանում տնտեսութեան նոր պահանջներին, եկեղեցու
արգելքը տոկոսների և վաշխի համար այլ ևս կորցնում է իւր
ուժը և առևտրականները հիմնում են առաջին բանկերը—
վարկի և տոկոսի սկզբունքով: Ֆէոդալական իրաւահարգը
կամաց կամաց սկսում է տեղի տալ հռոմէական իրաւունքին,
որը դարձեալ յարութիւն է առնում և կանոնաւորել սկսում
մարդկանց տնտեսական և հասարակական յարաբերութիւն-
ները:

Ի հարկէ այս շարժումը միաժամանակ և հաւասար ուժով
չսկսուեց ամբողջ Եւրոպայում: Իտալիայում ամենից շուտ և
ամենից ինտենսիւ կերպով նշմարուեցին նոր հովերի հեաքեր.
այնտեղ էր, ուր մարդիկ ամենից վաղ դուրս եկան փակու-
ծութիւնից ու հիմնեցին առևտրական բնկերութիւններ,
սկսեցին տնտեսական ապահովութիւնը այլ հիմքերի վրայ
դնել: 13, 14-րդ դարում Իտալիան յայտնի էր իւր ծաղկած
Նոմբարդական քաղաքներով, իւր դարգացած առևտրով և դրա
հետ միասին ուժեղ և բանիմաց, ձեռներէց և գիտակից քա-
ղաքացիներով: Նոյն դարի վերջերից և ամբողջ 15-րդ դարի
ընթացքում այդ շարժումը տարածւում, ընդհանրանում է
նաև մնացեալ Եւրոպայում:

* * *

Տնտեսութեան ձևերի հետ միաժամանակ և նրանից յետոյ
փոխւում է նաև միջնադարեան միտքը, նրա հոգեկան բովան-
դակութիւնը: Այս մտաւոր վերածնութեան, կուլտուրական
այս յեղաշրջման բուն հայրենիքը դարձեալ Իտալիան է, որով-
հետև նախ, որ Իտալիայում բուն միջնադարեան կուլտուրան
երբէք չէր արտայայտուել իւր ծայրայեղ և բիւրեղացած բնո-
ւոշ կողմերով, ուրեմն և շատ հեշտ էր աւելի շուտ թօթա-
փել եղածը, և ապա այստեղ—հին հռոմայեցիներին այս կլասիկ
երկրում շատ աւելի նախապայմաններ կային այդպիսի վե-

քաճնութեան, քան ֆրանսիայում կամ Գերմանիայում:

Ամբողջ 15-րդ դարը վերածնութեան դարն էր: Սակայն ինչն էր վերածնւում: Միակողմանի կը լինինք, եթէ ասենք, որ միմիայն յուսակոն և հռոմէական արուեստը, գրականութիւնը: Վերածնւում էր ամբողջապէս մարդը ինքը. թօթափում էր իւր վրայից կաշկանդող կապանքները անտեսութեան մէջ, ծանր շղթաները ամենապարփակ եկեղեցու մէջ, տառապանքի կնիքը ճգնողական հոգեբանութեան մէջ—վերածնւում էր մարդը և նոր կեանք էր որոնում. և յանկարծ նրա աչքը կանգ է առնում հին յոյնի և հին հռոմայեցու վրայ ու ապշում, զարմանում է: Զարմանում է, թէ ինչպէս անբան և անմիտ կերպով է ապրել ինքը, միջնադարեան մարդը, այդքան երկար դարեր, թէ ինչքան խոր բարբարոս է մնացել նա դեռ յոյնի և հռոմայեցու համեմատութեամբ մտքի, զգացմունքի, կամքի արապայտութեան մէջ, և անյոյս ու շացածի հոգեբանութեամբ նետւում է կլասիկ կեանքի ուսումնասիրութեան մէջ, այնտեղ որոնելու նոր կեանքի սկզբունքներ: Անտիկաշխարհի աստուածային գեղեցկութիւնը նորից յարութիւն է առնում, նորից բացւում է իսկական Արիստոտելի և աստուածանման Պլատոնի կախարդական լեզուն և գերում, կաշկանդում անցման շքուղանի եւրոպացուն: Հեթանոս աշխարհը իւր գրականութեամբ, բանաստեղծներով, իւր փիլիսոփայութեամբ և հռետորներով, թւր արուեստով ու ճարտարապետութեամբ, իւր ամբողջ կեանքով և աշխարհայեցողութեամբ աննման եռանդով ու սգեղութեամբ ուսումնասիրութեան նիւթ է դառնում: Բնութիւնը նոր է սկսում բաց անել իւր խորին ծաքերը, նոր են երևան գալիս բնութեան խորհուրդները—և բնական գեղեցկութիւնը, որ մինչև այդ ժամանակ խոտելի էր, այդ դառնում է մարդկանց նոր պաշտամունքի առարկան: Մարդ զգուանքով նկատում է, որ ամբողջ միջին դարում գոթական բարբարոսութիւնն է, որ իշխել է: Կենդանութիւն են ստանում բոլոր արուեստները, հին յոյնի և հռոմայեցու ամբողջ մտածողութիւնը, նրանց բովանդակ կենցաղավարութիւնը: Դրժգունում, թուլանում է սխոլաստիկան, որ ճարպիկ բանավարութիւնների մի ամբողջ շարան էր, և դրա տեղ իւր յաւէրժ գեղեցիկ զրօշակն է պարզում բանականութիւնը—աստուածային և անթառամ:

Ինչ կասկած, որ արուեստի, փիլիսոփայութեան և գրականութեան հետ միասին վերացուէր նաև հեթանոս աշխարհի հոգին և ուժգին բաղխուէր միջնադարեան մարդու հոգեբանութեան հետ: Միջնադարեան կրօնը հակաբնական, հակա-

մարդկային էր. նրա գերբնական և մետաֆիզիկ բնոյթը անկարելի էր դարձնում մարդու համար վայելել այս աշխարհի բարիքները, և հանդերձեալ կեանքի բոլոր սարսափները լցնում էին մարդու հոգին մշտական սարսուռով: Որքան տարբեր էր վերածնուած կրօնը, հեթանոս յոյնը նոյն իսկ իւր աստուածների մէջ անմահացրել էր կեանքն ու բերկրանքը, վայելքն ու ուրախութիւնը: Բնութիւնից նա հանում էր ամեն ինչ, որ կարող էր, և բոլորը իւր անձնական բաւականութեան համար: Հանդերձեալ կեանքը քիչ էր հետաքրքրում նրան, և նա ապրում էր ներկայի համար, ազատ և գեղեցիկ բնութեան մէջ, երգում ու պաշտում էր այդ բնութիւնը:— Այդ կեանքը խանդավառ ոգևորութեամբ այժմ անցնում է վերածնութեան դարին: Որնեսանսի մարդը դժոխքի և հանդերձեալ կեանքի մասին լսելիս, վարանելով և արհամարանքով ուսերն էր թոթւում միայն. հետեւեալ ատղերը բնորոշ են այս շրջանի համար.

Jor, wer dorthin die Augen blinzend richtet!..

Dem Tüchtigen ist diese Welt nicht Stumm,

Was braucht er in die Ewigkeit zu schweifen?

Բնութիւնը նոյնանում է Աստուծոյ հետ, և Զորդանս Բրունոն, վարդապետում է աստուածութեան և բնութեան անսահմանութիւնը:

Այս փոփոխութեանը, անտիկ կեանքի այդօրինակ վերածնութեանը հետեւում է գիտութիւնների և գիտական մտածողութեան յեղափոխումը: Իւր միջնադարեան դահոյքից իջնում է աստուածաբանութիւնը, մետաֆիզիկ ու վերացական խորհրդաճութիւնը և ծնւում է բնագիտութիւնը, որ և անմիջապէս յենւում է բնութեան վրայ, իրան իբրև գործիք ծառայեցնում է փորձը, գիտողութիւնը: Կերպարանափոխւում է նաև դպրոցը և դպրութիւնը: Ուսուցիչն ու աշակերտը աչքերը վեր են բարձրացնում և դարմանքով նկատում, որ դարեր շարունակ միևնոյն կէտի վրայ են կանգնած եղել, և մի տենդային աշխատանք է սկսւում՝ ձեռք բերելու, հասնելու և կրկին ապրելու այն ժամանակը, որ այդպէս ապարդիւն է անցել:

Հիմքից սասանւում է միջնադարեան հեղինակութիւնը. անհատը պատռւում է անթափանց քօղը և գերմարդկային ճիգերով մի անդամից ուղղում է ազատ ու անկախ յոյնին հասնել: Մարդու եսը իրան զգալ է տալիս և հրաժարւում է եղած հասարակակարգն ընդունել միմիայն նրա համար, որ այդպէս է: Նա հիմքեր է որոնում և իւր հաւաստիութիւնը բանականութեամբ պայմանաւորում: Զարթնում է քննա-

դատող միտքը ու մոլորութիւնները, սնոտիապաշտութեան ու կանխակալ կարծիքների մի անդունդ բաց անում միջնադարեան հասարակահարգի մէջ:

Վերածնութեան դարու մարդը շատ շուտով դադարում է լոկնմանւող լինելուց և հանդէս է բերում իւր հոգեկան կարողութիւնների բովանդակ ծաւալը: Գեղեցիկ Խալիլայում աստուածանման Գանտէի և Պետրարկայի շաւղով միջնադարեան անկենդան կեանքի մէջ ծագում են Ռաֆայէլն ու Միքէլ Անջելոն և մի անգամից ուժգին թափով լսելի դարձնում նոր ժամանակների շէշտը: Ակնյայտնի է լինում, որ Եկեղեցու բացարձակ տիրապետութիւնը ժողովուրդների և հասարակութեան անհատական բազմակողմանի դարգացման համար գերեզման է եղել լոկ: Եւ կեանքը սկսում է աշխարհակախառն: Գարձ դէպի հին ժամանակները, ասում է Պետրարկան, դէպի կրթութեան և մտաւոր յառաջադիմութեան միակ աղբւրը: Նորից պէտք է վերականգնել այն ամենը, ինչ որ այդքան երկար ճնշուել էր միջնադարեան Եկեղեցուց: Եւ գիտութիւնն ու կրթութիւնը սահում, դուրս է պրծնում հոգեւորականի ձեռքից և գիտնական աստուածաբանները գունատում են մարդկային հետախուզող մտքի, անխնայ քննադատութեան սուր հարուածների հանդէպ:—Աշխարհականացման ոգին արտայայտւում է նաեւ այն փաստի մէջ, որ միջնադարեան և քրիստոնէական բոլոր իսկական և կասկածելի սրբերը և սրբութիւնները, որոնց առաջ մոլեռանդ և սնոտիապաշտ միջնադարեան մարդը խունկ ու մոմ էր վառում, որոնցով ապրում ու ղեկավարում էր իւր կեանքը, այժմ տեղի են տալիս հին աշխարհի մեծ մարդկանց առաջ, մեծ փիլիսոփաներն ու գրողները, յունական և հռոմէական հասարակական գործիչները, պետական աստիճանաւորները հաւասար պատկառանք և ակնածութիւն, շուտով նաեւ հիացմունք են ձեռք բերում նորածագ հասարակութեան մէջ և մարդը արագօրէն ու հաստատուն կերպարանափոխւում, յեղաշրջւում է:

Այսպիսով տեսնում ենք, որ շնորհիւ վերածնութեան—յունական և հռոմէական վերածնւող մտքի ու հոգու, շնորհիւ մարդկային իրաւունքների, նրա արժանապատւութեան խոր գիտակցութեան—միջնադարեան մարդը արագ կերպով թութափում է իրանից կապանքները, ամեն կարգի խնամակալութիւնները և դուրս գալիս դէպի նոր ճանապարհների, դէպի նոր աշխարհներն ուղին: Բայց ինչպէս էր վերաբերւում ինքը, միջնադարեան ամենամեծ խնամակալը, դէպի այս շարժումը: Ինչ էր Եկեղեցու վերաբերմունքը:

*

* *

Իտալական Ռենեսանսը և Հռոմանիզմը չի կարելի ասել, թէ անմիջապէս ազդեցին պապական հեղինակութեան թուլացման վրայ: Կաթոլիկ եկեղեցին այնքան ուժեղ էր և ինքնագիտակից, որ երբէք դուշակել անգամ չէր կարող, որ հէնց մտքերի այդ աշխարհականացման, բանականութեան այդ յաղթանակի մէջ թագնուած են իւր մօտալուտ քայքայման, բաժանման հաստատուն պատճառները: Կաթոլիկ եկեղեցին սկզբում, ընդհակառակը, ինքը ոչ միայն չէր հալածում հռոմանիստներին, ոչ միայն հանդուրժում էր նրանց, այլ և իւր բարձրագոյն ներկայացուցիչների միջոցով համակրում, այո, նոյն իսկ մասնակցում էր այդ շարժմանը—այդ մշտապէս առաջադիմող աշխարհականացմանը: Այդ երեւոյթը շատ պարզ է, որովհետեւ երկար ժամանակ ասկետական խոհերի, հանդերձեալ կեանքի տանջող ստուերների տակ կուշ եկող մարդը մի անգամից բնութեան գիրկ նետուելով, հնարաւորութիւն գտնելով ճաշակել կեանքի ամեն տեսակի բարիքները—առաջին շրջանում դուտ զգայական վայելքի յետեւից կընկնէր և վտանգ չէր կարող ներկայացնել համարեա թէ նոյն կեանքով ապրող հոգեւորականութեան համար: Կեանքի ուրախ խնձոյքին մասնակցում էին բոլորը—կարծես իրանց բազմադարեան զսպուածութեան և ժուժկալութեան փոխարէնը միանգամից հանելու: Արուեստների, գիտութեան և մտքի վերածնութիւնը բարբերի և բարոյականութեան վերածնութիւն չէր. ընդհակառակը հէնց վերածնութեան դարն էր, որ հասկանալի հոգեբանական պատճառներով, աւելի ևս սանձարձակ ու անդուտ դարձրեց կեանքն ու բարքերը, քանդեց, քայքայեց կապերը և ազատ գործադրութեան ուղին ցոյց տուեց մարդկանց—անվերապահ ու առանց պատկառանքի: «Երբէք չէ ապրել մի հասարակութիւն, այդպէս փայլուն կերպով զարգացած, այդքան հարուստ ինտերեսներով և ձիրքով, անմահ գործերի ստեղծագործութեամբ այդքան կարող ու հպարտ, բայց և միեւնոյն ժամանակ այդքան խորը անկրօնական, այդքան զուրկ բարոյականի, հասարակական իդէալների զգացումից—ինչպէս այդ տեղի ունէր 15-րդ դարի երկրորդ կիսում Իտալիայում:»

Վերածնութեան դարի պապերը քիչ էին տարբերւում իրանց ժամանակակից հասարակութիւններից: «Հռոմի արքունիքը, ինչպէս ասում է Եկատերինա Սէննային, փոխանակ երկնային

առաքինութիւններէ դրախտ լինելու, դիւանական մեղքերի դա-
զիր որջ է գարձել»։ Սկզբում նեղ շրջանում, միայն բարձրաս-
տիճան հոգեւորականների ու պրելատների մէջ, բայց հետզհետէ
ոճերն ու յանցանքը տարածւում է նաև ստորին հոգեւորա-
կանութեան մէջ, և կաթոլիկ եկեղեցականը իւր ապականուած
բարքով միայն դայթակղութեան քար է դառնում աշխար-
հականի համար։ Բաւական է յիշել Պօղոս II, Սիքստոս IV,
Իննսկենսախոս VIII, Ալէքսանդր VI... պապերին և նրանց ժա-
մանակը, որ պատկերացնենք բարքերի այն համատարած ապա-
կանութիւնը, որ հանդիպում է մեզ այդ շրջանում։ «Հոռ-
մում—ասում է Նէոպոլիդ Ռանկէն—հասարակութեան մէջ
քրիստոնէութեան հիմնական գաղափարներին հակասելը խօս-
քով ու գործով—համարւում էր քաջութիւն. մարդիկ մրցում
էին իրար հետ այդ կողմից»։ Մակիկեաւելին, այս շրջանի ա-
կանաւոր անձնաւորութիւններից մէկը, հետեւեալն է գրում.
«Մենք, իտալացիներս աւելի քան որ և է այլ ժողովուրդ, չար
ենք և անկրօնական. որովհետեւ Հռոմի պապական արքունիքը
իւր սպասաւորներով ամենալատթար օրինակն են տուիս մեզ։
Որքան մօտ լինի որ և է ժողովուրդ Հռոմին, որ մեր կրօնի
կենդրոնաւայրն է, այնքան նա աւելի պակաս կրօնական կը
լինի»։

Այժմ հասկանալի է, որ այդ Կաթոլիկ եկեղեցին, այդպիսի
ներքին և հոգեկան բովանդակութեամբ չէր կարող վտանգ-
տեսնել Ռենեսանսից և Հումանիզմից։ Եւ միջնադարեան եկե-
ղեցին շարունակում էր երկդիմի և երկերեսանի ընթացքը—
ներսից փչացած և աշխարհականացած, գրեց հոգեւոր ու
մտաւոր ինտերեսների պաշտպան։

Բայց եկեղեցին այդպէս շարունակուել չէր կարող։ Անց-
ման շրջանի հասարակութեան մէջ բաղմաթիւ մարդիկ կային
—անհատներ և համայնքներ, որոնք դառնացած եկեղեցու
այլասերման համար, սրտացաւ հոգեւոր միութարութեան հա-
մար, տենչանքով սպասում էին այն օրերին, երբ եկեղեցուն
ևս պէտք է վերածնութիւն դար, երբ մարդու կրօնական, հո-
գեւոր պահանջն ևս պէտք է խորապէս բաւարարուէր, առանց
ցուցադրուելու, առանց վերաւորուելու։

Սակայն կրօնական վերածնութեան ճառագայթը Իտա-
լիայից չճաղեց—գրտում, Իտալիայից հեռու, Անգլիայում,
Բոհեմիայում ու Ֆրանսիայում և մանաւանդ Գերմանիայում
շատ էր այն մարդկանց թիւը, որոնք սերունդէ սերունդ աշ-
խատել էին եկեղեցու վերածնութեան դործի համար. աշխա-
տել էին, սակայն մեծ մասամբ ապարդիւն։ Բայց այժմ Գեր-

մանկայի յետ ընկած անկիւններէց մէկում—հեռու դիտու-
թեան մեծ կենդրոններէց, մի հասարակ վանական է հանդէս
գալիս, որ տեսել էր Հռոմի կեանքն ու ապականութիւնը, որ
մենութեան ժամերին խոր կերպով մտածել էր կրօնական և
հոգևոր այլատերման վրայ ու ըսուէն զայրոյթով լցուել էր
դէպի կաթոլիկութիւնն ու նրա արտաքին շուքը, դէպի պապն
ու նրա արքունիքը: Այդ վանականը Ազգութիւնեան վանքի
միաբան էր, աստուածաբանութեան դոկտոր Մարտին Լու-
թերը: Սկզբում ինքն էլ չէր զգում, թէ ինչ մեծ գործի ազ-
դանշանն է տալու. բայց կատարուեց այն, ինչ որ բաղմատիւ
սերունդներ նախապատրաստել էին: Մարտին Լութերը հնձեց
այն, ինչ որ ցանել էին միջնադարեան բաղմատիւ իդէալան
ազանդաւորները, ինչի համար որ մեռել էր Հոսիւր և պայքա-
րում էին Հուսեանները, ինչ որ ոգևորել ու անսպառ եռանդ
էր ներշնչել Ուիկլիֆին և նրա բաղմատիւ կուսակիցներին:

Պատմութեան մէջ կրօնական վերածնութիւնը կոչւում
է Ռեֆորմացիա և կապուած է Մարտին Լութերի անուան
հետ: Ռեֆորմացիան թէև Ռընեսանսի և Հումանիզմի հետ շատ
նման և ընդհանուր դժեր ունի, սակայն կեանքը վերածնելու
գործում շատ աւելի խորն էր գնում, հոգիների փրկութիւնը
շատ աւելի սրտանց և անկեղծ հասկանում, քան այդ անում
էր Ռընեսանսը կամ Հումանիզմը: Կրօնական որոնումներին,
հոգևոր վերքերին տեսական սպեղանի էր բերում Ռեֆորմա-
ցիան:

Միջնադարի համար աշխարհը յանցանքի աշխարհ էր. «այդ
է պատճառը, որ միջնադարեան բարեպաշտութիւնը աշխարհի
բացասման մէջ էր: Հէնց այդ մտքով էր, որ վանականը փախ-
չում էր ամուսնութիւնից, կալուածքից, ստացուածքից—աշ-
խարհի արուեստներից և գիտութիւններից, նրա ուրախու-
թիւններից և պարտականութիւններից, իւր մարմինը խորա-
դանում էր և ցանկութիւնները սանձում»: Եւ այդ ամենը
միմիայն իւր անձնականի, իւր եռասէր ձգտումների համար:

Ռեֆորմացիայի յորձանքներից լսում են այժմ ազգու և
ներշնչող շէշտերը այն քարոզի, թէ «Հաւատա Կիսուս Քրիս-
տոսին, զգա նրա աւետարանի սէրը, ապրիւ այդ սիրով և
դժու քեզ հետ նաև ըս տունը կերջանկանաք»: Եւ աշխար-
հիկ կեանքը, որ Ռընեսանսի միջոցով բաց էր արել իւր նոր
կողմերը, այժմ Ռեֆորմացիայի շնորհիւ ցոյց է տալիս իւր գրա-
ւիչ կողմերից շատերը: Կեանքը իւր բովանդակ ծաւալով, պե-
տութիւնն ու համայնքը, ընտանիքն ու հասարակական գոր-
ծունէութիւնը դարձեալ քաշում են մարդուն, սիրելի դառ-

նույն նրա համար: Ամուսնութիւնը, որ մինչև այդ ժամանակ զգոնացին էր թուում, այժմ կրկին երևում է, որպէս միակ ճշմարիտ, կենդանի, սուրբ կեանք, որի մէջ աղամարդուն պատրաստուած է մշտական մի ապաստանարան կեանքի անախորժութիւններից հանգստանալու: Պետութիւնը, որ սատանայի դործ էր համարւում, այժմ դառնում է անտուածային մի հասարակարգ, որի մէջ մարդ հնարաւորութիւն է ստանում աստիճանաբար կատարելագործել իր տէրտեսական և քաղաքացիական իրաւունքները: Երկրագործութիւնն ու առևտուրը, արհեստն ու արդիւնաբերութիւնը, ամբողջ քաղաքացիական կեանքը իր բովանդակ ընդունող կողմերով, իր գիտութեամբ ու իմաստութեամբ, իր աշխատանքով և հասարակութեան նուիրուած գործունէութեամբ այս բոլորը ապացոյց է, որ միջնադարեան կրօնական հոգեւոր կեանքը սրբացել է, վերածնուել, աշխարհը դարձել է ճշմարտութեան, յաւիտենական առաջխաղացման մի տաճար, որի մէջ մարդիկ կողք կողքի պէտք է աշխատեն, կատարելով ամեն մէկը իր պարտականութիւնը:

Լուծելի Ռեֆորմացիան ռումբի որոտ էր, որ պայթեց պապականութեան գլխին: Կաթոլիկ մի ու անբաժան եկեղեցին բաժանուեց, անասան շէնքը պառակտուեց, փուլ եկաւ, և եկեղեցու ամենակարող հեղինակութիւնը ընդ միշտ անդունդ գլորուեց: Ռեֆորմացիան լրացրեց, ամբողջացրեց Ռենեսանսի և ամբողջ Եւրոպայի բոլոր անկիւնները և ամենուրեք գրկաբաց ընդունուեց, որովհետև եկեղեցական կեանքի վերանորոգութեան պահանջը ամեն տեղ կար, իրականութիւն էր: ձիշտ է, կաթոլիկ եկեղեցին ոչ մի միջոցի միջ խտրութիւն չգրեց կռուելու և կոտորելու նոր դաւանութեան-բողոքականութեան հօգի գրոհի ուժը. ձիշտ է, ամենուրեք խարոյկներ բարձրացան, և կախաղաններ ուղղուեցին, կաթոլիկ ինկվիզիցիայի ժառանգները կրկնապատկուեցին և ձիզուկութների հնարքները բազմացան—բայց այդ բոլոր միջոցները լուրջ ժամանակաւորապէս ազդեցութիւն ունեցան և չկարողացան նոր մտքի, ազատ դաւանութեան և անկաշխանդ հաւատի ձայնը խեղդել, և կարճ ժամանակում բողոքականութիւնը զանազան անուններով և ձևով երևան եկաւ, տարածուեցաւ ամբողջ Գերմանիայում, Դանեմարքայում, Նորվեգիայում, Անգլիայում, Հոլանդիայում, Շվեյցարիայում, իսկ մնացած երկրները մէջ կաթոլիկութեան հաւասար տանելի դարձաւ:

Ռեֆորմացիայի այդպէս արագ տարածման մեծագոյն պատճառներից մէկն էլ այն էր, որ եւրոպական շատ իշխան-

ներամեն կերպ նպատուած էին բարենորոգչական շարժմանը, եկեղեցու հարստութիւնն անցնում էր իշխանների ձեռքը, աշխարհականանում էր. որովհետեւ Վոլթերի ու Ռեֆորմատորների ամբողջ քարոզը եկեղեցու աշխարհականացման գէշ էր:

*
*
*

Ռընեսանսի, Հումանիզմի և Ռեֆորմացիայի հետ զուգընթացաբար եւրոպական հասարակութիւնը ապրում, տկանատես է լինում այնպիսի յեղաշրջումների, որոնք շարունակելով նոյն ուղղութեամբ եղած նախկին շարժումները (Խաչակրաց արշաւանքները...) ընդարձակում, ընդլայնացնում են նրա մտաւոր ու տարածական հորիզոնը, որոնց շնորհիւ միջնադարեան մարդը արդէն բոլորովին դուրս է գալիս նեղ, ոահմանափակ վիճակից ու ազատօրէն ու հպարտ թեւակոխում նոր ժամանակների շէմքը:

Մտաւոր վերածնութեան այս շրջանում գիւտեր շատ են եղել. բայց դրանց մէջ մէկը կայ, որ խոր, անանց ու աներեւակայելի ազդեցութիւն է անում ազգերի ներկայ ու յետագայ զարգացման վրայ: Դա տպագրութեան հոյակապ գիւտն է, որ մի շարք անկատար փորձերից յետոյ վերջապէս Յովհան Գուտտենբերգին յաջողւում է: 1436 թուին սա մեծագեայ տառեր է ձուլում և տպագրութեան մամուլ է շինում. և նրա անդուլ ջանքերով 1450 թ. լոյս է տեսնում առաջին լատիներէն աստուածաշունչը: «Գրքի տարածման, ժողովրդականացման և էթանացման ամենամեծ արդեւորներից մէկը վերացել էր. գանուած էր տպագրութեան մեծ և հոյակապ արուեստը, և հիմք էր դրուած քաղաքակրթական մի հաստատութեան՝ տպարանին: Այնուհետեւ եւրոպական ազգերը մինչեւ այդ ժամանակ չտեսնուած արագութեամբ զարգացնում, ծաղկեցնում են գրականութիւնը: Բազմանում են տպարաններն ու գրքերը և հազարներով ու տասնեակ հազարներով ցրւում ազգարնակութեան զանազան խաւերի մէջ: Գրքը դուրս է գալիս վանքից և մենաստանից. հեղինակն ու թարգմանները լինում են նաեւ աշխարհականներ, և գիրքն ու գրականութիւնը թէև աստիճանաբար, բայց հաստատուն և վրձնականօրէն ընդունեն ժողովրդականացման փրկարար ուղին: Յովհան Գուտտենբերգը գտնւում է մարդկութեան մեծագործ բարերարը:» (Մեծ Յոր. Գ. Ալթ. 54-55:)

Տպագրութեան գիւտի հետ միաժամանակ մի փոքրիկ գործիք հնարուեց, կոմպաս, որին վիճակուեց կարճ միջոցում նոր աշխարհներ յայտնադործել և այդպիսով անցման շրջանի տարածական հորիզոնը անսահմանօրէն ընդարձակել: Իսպանական և Փորտուգալական խիզախ ծովագնացները երկար ժամանակ տանջւում էին մի մտքով՝ Հնդկաստանի ծովային ճանապարհը գտնել: Եւ Քրիստափոր Կոլումբոսը այդ ցնորքի մէջ էր, որ 1492 թ. հոկ. 12-ին Ամերիկայի ամբողջութեամբ եկաւ: Այդ ճանապարհի փոխարէն մի նոր աշխարհ էր գտնուել, մեծ ու անծանօթ, որ շուտով իսպանական ու պորտուգալական քաղաքները սսկով ու արծաթով պիտի լցնէր: Կոլումբոսին, Դիացին, Վասոդո—Դէ—Գամային հետեւում է անվեհեր ծովագնացը—Մագելան, որ իրագործում է Կոլումբոսի միտքը, գրտնում է Հնդկաստանի ծովային ուղին և Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի ամերթով լողալով կատարում է առաջին շուրջերկրեան ծովագնացութիւնը: Լիսաբոնը բռնում է Վենետիկի տեղը և դառնում է Եւրոպայի համար ապրանքների շտեմարան: Առեւտուրը չտեսնուած դարի է ստանում: Սպանական և Փորտուգալական բախտախնդիրներն ու արկածախնդիրները խմբերով «նոր աշխարհ» են թափւում: Խիզախութեան և քաջութեան հրաշքներ են գործւում, և նոր աշխարհի անբաւ հարստութիւնները հետզհետէ Եւրոպա տեղափոխւում: Յապէս ոսկու և արծաթի բաղմութիւնը առատպելական էր: 22 միլիարդ մուտք են հաշւում այն ագնիւ մետաղների քանակութիւնը, որ Եւրոպացիք Ամերիկայից տուն բերին յայտնագործութիւնների այդ շրջանում: Ոսկու առատութիւնը մի խիստական յեղաշրջում մտցրեց և կատարելագործեց այն գործողութիւնը, որ 14-րդ դարից սկսուելով, շարունակ առաջադիմել էր: Քաղաքացի դատակարգը վերջնականապէս կազմակերպուեց և ոկսեց իւր քաղաքական այն ասպարէզը, որի մէջ նա մինչեւ օրս այդպէս փայլուն կերպով գործում է:

Այս բոլոր փոփոխութիւնների ազդեցութեան տակ, որոնք կատարւում էին դանդաղօրէն ու յամբընթաց, բայց հաստատուն ու անընդհատ, այլակերպւում, կերպարանափոխւում է նաև ազգերի և ժողովուրդների տնտեսական բովանդակ կեանքը: Փակ դերդաստանային տնտեսութիւնը, որ դժգունել էր և դեռ միջին դարերում տեղի էր տուել քաղաքային տնտեսութեանը, այժմ անցման այս մեծ շրջանում հետզհետէ փոխարինւում է ժողովրդական տնտեսութեամբ: Միջնադարեան փահուածութիւնը, տեղական, գաւառական և տերրիտորեալ շահերն ու յարաբերութիւնները հետզհետէ ընդար-

ձախուռն են ու ի մի խմբում: առաջ են դալիս քաղաքային (քաղաքների) միութիւնների փոխարէն քաղաքական միութիւններ, և անտեսութիւնը, որ առաջ տան կարիքների համար էր, ապա քաղաքի կարիքների, այժմ իրան նպատակ է դնում ապահովել ու բաւարարել ամբողջ ժողովրդի կարիքները: Ֆէոդալիզմը, որ իւր հիմքից խախտուել էր այդ մի շարք փոփոխութիւնների պատճառով, պահել էր դեռ բաւականին ոյժ: այժմ քաղաքական և անտեսական բոլոր կազմակերպութիւնների նպատակն է լինում ոչնչացնել ֆէոդալական կազմի վերջին մնացորդները, ջախջախել բոլոր մասնակի սեպարատ շահերը, խորտակել առանձին, անկախութեան ձգտող բոլոր կորպորացիաների ուժը և կազմել մի զօրեղ քաղաքական միութիւն: Մարդկութիւնն այժմ իրան կանգնած է տեսնում աւելի լայն ու ընդարձակ պրոբլեմների առաջ, որոնց իրագործման համար սակայն կարիք է զգացւում ժողովուրդների ամբողջական, միահամուռ գործունէութեան, որը միմիայն ընդհանուր—ժողովրդական անտեսութեան հողի վրայ կարող էր առաջ դնալ: Որեւէ երկրի իւրաքանչիւր շրջան, որեւէ ազգի իւրաքանչիւր մաս հասարակութեան ընդհանուր բարիքի համար իւր վերայ է վերցնում այնպիսի պարտականութիւններ, որ նա ամենից յաջող կերպով կարող է կատարել:

Միջնադարեան սեպարատ շահերի, նեղ փախուստութեան մի երևոյթն էր նաև առևտրական և արդիւնաբերական կեանքի կապուածութիւնը, անազատ վիճակը: Բայց այժմ հետզհետէ իրականութիւն է դառնում անտեսական—առևտրական մի սիստեմ, որ յետոյ կոլլեբրալիզմ կամ մերկանտիլիզմ անունն է ստանում, և որի դիւտաւոր գործն է լինում խորտակել ոչնչացնել տեղական—գաւառական, նահանգական կապանքներն ու արգելքները, որոնք կասեցնում էին որեւէ ամբողջական երկրի պրոդուկտիւ կեանքը: հետզհետէ վերանում են մաքսերն ու տուրքերը, որոնք խտցանցի պէս դաւառներն իրարից բաժանում էին, դիւղը դիւղից զատում: Տեղափոխութեան խանգարիչ հանգամանքներն աւելի ու աւելի տեղի են տալիս ազատ շարժողութեան: կազմակերպւում, կանոնաւորւում են չափերն ու կշիռները, հիմնարկւում են և կեանք ստանում մի շարք նոր հաստատութիւններ առաջ է դալիս պետական փոփոք, լրագրերը, ազգային առևտրական նաւատորմիչ: ամենուրեք նկատելի է ժողովրդական անտեսութեան տենդենցը—բանգել տեղական մանր մուկը կապանքները և ստեղծել մի հզօր ազգային ժողովրդական կազմակերպութիւն, որ ունենայ իւր միահամուռ արտա-

դրութիւնը իր ազգային շուկան, ազգային փոխանակութիւնը:

Մենք տեսնում ենք, արդէն այս վերջին Ֆաղը շատ հեռու է միջնադարեան կոչուելուց: Միջնադարը դարեր տեղացի այս հսկայական շարժման տակ լուծւում, քայքայւում է:

* * *

Մեզ մնում է անցման շրջանի մի կողմը ևս նկարագրել: Ռընեսանսն ու Հումանիզմը, տնտեսական յեղափոխութիւնն ու Ռեֆորմացիան փոխեցին, հիմքից շրջեցին միջին դարը: Բայց մարդը ինքը, կրողը այդ բոլորը շարժումներն — իրաւական տեսակէտով դեռ միջնադարեան վիճակի մէջ էր: Նրա գոյութեան հիմքերը լսախտուել էին, ֆէոդալական կապերը ընկել, քանդուել: Նա պոկուել էր հողից, ազատուել ճորտատիրական ծանր պարտականութիւններից, դադարել էր իւր տէրերի քմահաճոյքին մշտական հըռ ծառայելուց. թողել էր հողն ու գիւղը, փախել, ապաւինել էր քաղաք, դառել քաղաքացի, արհեստներն ու վաճառականութեան տուելիքան. բայց այդ բոլորի հետ միասին, նա դեռ հասարակութեան հարազատ անդամ չէր, որովհետեւ նրա դասակարգը արտօնեալ չէր, ընտիր ու ազնուական չէր:

Դեռ բարձր էին արտօնութիւնները, բազմաթիւ ու բազմատեսակ պրիվիլեգիաները. դեռ ազնուականն ու հոգևորականն արհամարհում էին գիւղացուն ու քաղաքացուն, դեռ զինւորականը բարձից էր նայում բազմամիլիոն ազդաբնակութեան վրայ, և երրորդ դասակարգի մարդը-քաղաքացին տեղ չուներ այդ հասարակակարգի մէջ: Բայց, ինչպէս տոացիներ, նա ուժ ունէր — տնտեսական արտադրական աշխատանքը, առևտուրն ու արհեստները նրա ձեռքումն էին և նրան պակասում էր միմիայն իրաւական ազատագրումը: Պետութիւնը դեռ պաշտպանում էր այդ աննորմալ վիճակը, նա դեռ մնացորդ էր միջնադարեան կարգերի և աւանդապահ կերպով դեռ հիմնւում էր արտօնութիւնների և առանձնաշնորհումների սիստեմի վրայ: Կեանքը փոխուել էր, բովանդակութիւնը յեղաշրջուել, բայց շրջանակները, կեանքի ձևերը նոյնն էին մնացել: Հարկաւոր էր մի զօրեղ ցնցում, մի վիթխարի հարուած, որ միջին դարի այդ բոլոր մնացորդներն ու ձևերը, բոլոր արտօնութիւններն ու քաղաքական իրաւական առանձնաշնորհումները վերանային, որ երրորդ դասակարգն ևս որպէս հարազատ զաւակ հասարակութեան, սկսէր գործել և դեր

խաղալ հասարակութեան մէջ: Հարկաւոր էր մի բռնկում, որով վերակազմուէր միջնադարեան պետութիւնը և քաղաքացիութիւն ստանային արդէն հասունացած նորդարեան մի շարք կազմուածքներ: Այդ հարուածը պատրաստուելով մի քանի երկրներում Անգլիական, Ամերիկական յեղափոխութիւնների օրերին, վերջապէս պայթեց Պարիզում—Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ: Ռեւոլուցիայի գործը և ազդեցութիւնների շրջանն հսկայական է ու անձայրածիր, բայց այդ գործի կենդրոնն այն է, որ Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը իսպառ խորտակեց վերջին մնացորդները կապուածութեան, անուշադրութեան, միջնադարեան կեանքի, քաղաքական և տնտեսական կեանքի հետ նաև իրաւական ոյժ տուեց երրորդ դասակարգին և իրանով դեֆինիտիւ կերպով յիակեց Նւրոպական ժողովուրդների միջին դարը: Մեր նախորոշեալ նպատակից բոլորովին դուրս է յեղափոխութեան մասին խօսել—յեղափոխութեան մէջ աւարտուում է անցման շրջանը, իսպառ անհետանում է միջնադարը, և հաստատա և աներկբայ կերպով սկսւում է նոր Դարը:

Ամփոփելով մեր ասածները՝ կըտեսնենք, որ նոր Դարը Նւրոպական ազգերի մէջ մի քանի կամուրջների վրայով է անցնում—վերածնութիւն մտքի և գրականութիւն, մտաւոր և տնտեսական հորիզոնների ընդլայնում, առևտրական և արդիւնաբերական կեանքի անօրինակ ծաւալում, կրօնական և քաղաքական կեանքի վերակազմութիւն—ուրեմն բարենորոգութիւն և յեղափոխութիւն: Ռընեսանս, Հումանիզմ, Ռեֆորմացիա և Ռեւոլուցիա—ասա այն էտապները, որոնց վրայով դանդաղօրէն բայց հաստատուն քայլում է նոր Դարը և Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից յետոյ արդէն իրականութիւն դառնում:

Բոլոր այդ շարժումները գործել են առանձին առանձին և շատ անգամ իրար հակառակ, իրարից անկախ, բոլորովին այլ պատճառներից առաջացած, իրարից հեռու թէ տեղով և թէ ժամանակով: Բայց գիտակից թէ անգիտակից, բոլորն էլ նպատակել են նոր ժամանակի առաջացման: Այդ բոլոր շարժումներն ու երևոյթները նման դանադան զօրաբանակների, տարբեր ճանապարհներով միևնոյն դաշտն են դուրս եկել—մէկը երբեմն ուշ, միւսը յաճախ աւելի շուտ—բայց բոլորն էլ վերջի վերջոյ անհրաժեշտ են եղել այն հոյակապ համերաշխութեան և ներդաշնակութեան համար, որի անունն է նոր Դար:

*
* *

Այսպէս ծնունեց, հասունացաւ ու զարգացաւ Նոր Դարը. ծնունեց հէնց միջնադարի մէջ, զարգացաւ ու իւր ուժերը հաւաքեց անցման ծանր շրջանում և ֆրանսիական մեծ յեղափոխութեան օրերին նա արդէն բոլորովին պատրաստ էր իւր յաղթական ու հպարտ ուղին սկսելու ազգերի այլազան ու այլատարր, խայտաբղէտ ու բիւրաւեղո՛ւ շարքերի միջով:

Ինչ խօսք, որ մարդկութեան միտքը և նրա աշխատող էութիւնը կանգ չի առնում այդտեղ. և ձեռք բերած նուաճումների պտուղներով ամրացած ու վստահ—նա ղեմում է աւելի ու աւելի նոր հորիզոնները—ստեղծելու իւր համար ընկերական ու հասարակական աւելի տանելի վիճակ, աւելի ցանկալի ու արդար դրութիւն: Աւայքարը հնի ու նորի մէջ այսօր ևս շարունակուում է նոյնպիսի ու աւելի ուժգնութեամբ, ինչպէս և սրանից միքանի դար առաջ, այն տարբերութեամբ միայն, որ այսօր ֆրանսիական յեղափոխութեան շէմքին կանգնած Նոր Դարը մինչդեռ Ասիայի ու այլ աշխարհամասերի համար դեռ իրականութիւն չէ դարձել և դեռ մնում է որպէս հասանելի մի հեռանկար, 20-րդ դարի Եւրոպայի համար նա արդէն դադարել է Նոր լինելուց: Որոնող և առաջադիմաց մարդկութեանը ոչ մի յաջողութիւն ոչ մի ասպարիզում չէ յողմեցնում ու հանգստացնում, ոչ մի նուաճում չի թմրեցնում անվհե՛ր ու առաջխաղաց վաստակաւորներին: «Նման հսկայ լեռան դագաթ ձգտող մի ուղևորի միշտ վեր, սարն ի վեր է ելնում մարդկութիւնը, դէպի կատարելութեան կախարդական սարը. ու կէս ճանապարհին պատահած ամեն մի բլուր, որ վերջնական նպատակ էր թւում, նորանոր հորիզոններ է բաց անում միշտ վեր, դէպի վեր, դէպի նուերական կայանը լաւագոյն ապագայի:»

Նոր Դարին յաջորդում է Նորագոյնը, սրան մի երրորդը և այդպէս անվերջ ու անվախճան: Ու կարծում էք, թէ այդ անընդհատ պայքարի, այդ շշմեցնող մղումն ընթացքում որևէ իրական նշանակութիւն ունի նպատակին հասնելը.—երբէք: Մարդկութիւնը երբէք չէ հասել իւր գերագոյն ձգտումների իրագործմանը և երբէք չի հասնի: Ապագայի թանձր մշուշով պղլուած նրա չքնաղ իդէալը երբէք չի մերկանայ, երբէք չի մօտենայ, այլ միշտ հեռուից փարոսի նման իրան կըքաշի ծաւալի ու անհանգիստ մարդկութիւնը:

Գ. Ալբուհեան.